# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

N 101-Ա 04 մարտի 2020թ.

## ԳՈՌ ՇԱԲՈՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի մարտի 26-ի N 91-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Մարտունու ծննդատուն» պետական փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 8.9 կետն ու Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Մարտունու ծննդատուն» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Արթուր Հովհաննիսյանի 2020 թվականի մարտի 4-ի N 29 գրությունն, ինչպես նաև Գոռ Շաբոյանի դիմումը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Մարտունու ծննդատուն» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի բուժական գծով տեղակալ Գոռ Շաբոյանի հետ կնքված 2014 թվականի մարտի 4-ի N 45 աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետն երկարացնել մինչև 2021 թվականի մարտի 4-ը՝ կնքելով համաձայնագիր:

04.03.2020

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

Ք.Գավառ